Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի թիվ 3/04-27.01.2021թ. որոշմամբ

Ուժի մեջ է մտնում 03.02.2021թ.

Խորհրդի նախագահ

---------- Ս. Սուքիասյան

ԿԱՐԳ
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2021

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ			
Հ/Հ	Որոշման/Հրամանի ամսաթիվ	Որոշման/Հրամանի համար	Փաստաթղթի նույնականացուցիչը
1	30.05.2014թ.	19/09-30.05.2014թ.	R/K/0/087/30.05.2014/1
2	11.03.2015թ.	05/04-11.03.2015թ.	R/K/0/087/11.03.2015/2
3	19.02.2016թ.	8/02-19.02.2016թ.	R/K/0/087/19.02.2016/3
4	27.12.2016թ.	60/21-27.12.2016թ.	R/K/0/087/27.12.2016/4
5	23.11.2017թ.	58/07-23.11.2017թ.	R/K/0/087/23.11.2017/5
6	31.05.2018թ.	19/10-31.05.2018թ.	R/K/0/087/31.05.2018/6
7	30.01.2019թ.	3/09-30.01.2019թ.	R/K/0/087/30.01.2019/7
8	30.01.2020թ.	5/15-30.01.2020թ.	R/K/0/087/30.01.2020/8
9	27.01.2021թ.	3/04-27.01.2021թ.	R/K/0/087/27.01.2021/9

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույնով սահմանվում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ) ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման կարգը (այսուհետ՝ Կարգ):

1.2 Սույն Կարգը մշակված է համաձայն ՀՀ օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի, Բանկի կանոնադրության, կարգերի և այլ ներքին իրավական ակտերի:

1.3 Սույն Կարգի իմաստով՝

1.3.1 Ներդրումային ծառայություն (ծառայությունների մատուցում)՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում, Բանկի կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում, Բանկի հաշվին և Բանկի անունից արժեթղթերով գործարքների կատարում:

1.3.2 Ոչ հիմնական ծառայություն (ծառայությունների մատուցում)՝ պահառություն:

1.3.3 Պահառության ծառայություն (ծառայությունների մատուցում)՝ սույն Կարգի համաձայն՝ Բանկի կողմից հաճախորդներին պատկանող պետական պարտատոմսերի հաշվառման, Բանկի կողմից արժեթղթերի հաշիվներում գրառումների, ինչպես նաև արժեթղթերի հաշվառման համակարգի այլ տարրերի հետ իրականացվող գործողությունների ամբողջություն:

1.3.4 Արժեթուղթ՝ պետական պարտատոմսեր և ոչ պետական արժեթղթեր (բաժնետոմսեր և պարտատոմսեր):

1.3.5 Պետական պարտատոմս՝ ՀՀ ֆինանսների նախարարության պետական (գանձապետական), ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված կամ այլ պարտատոմսեր, որոնց պահառությունը իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը:

1.3.6 Հաճախորդ՝ իրավաբանական և ֆիզիկական անձ, որի հետ Բանկը կնքել է ներդրումային ծառայությունների մատուցման, ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման և հետգնման աճուրդներին ծառայությունների մատուցման գործակալության և(կամ) պետական պարտատոմսերի պահառության պայմանագիր:

1.3.7 Արժեթղթերի հաշիվ (Դեպո հաշիվ)՝ հաճախորդների արժեթղթերի հաշվառման հաշիվ:

1.3.8 Հատուկ հաշիվ՝ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման և հետգնման աճուրդներին մասնակցության միջոցների ապահովման համար Բանկի կողմից բացված դեպո և դրամային հաշիվներ:

1.3.9 Պատվեր՝ արժեթղթերով գործարքների կնքման նպատակով ներկայացվող հաճախորդի, ինչպես նաև Բանկի կարգադրությունը, հանձնարարությունը, հայտը կամ առաջարկը:

1.3.10 Լիմիտային հայտ՝ անմիջապես ակտիվացմամբ (ֆոնդային բորսայում հայտի տեղադրում) գնման (վաճառքի) հայտ, որն առևտրային համակարգ մուտքագրվելու պահին կարող է մասնակիորեն/ ամբողջությամբ բավարարվել հայտում նշված գնով կամ մուտքագրվել հայտերի հերթում հայտում նշված գնով:

1.3.11 Շուկայական հայտ՝ անմիջապես ակտիվացմամբ (ֆոնդային բորսայում հայտի տեղադրում) գնման (վաճառքի) հայտ, որն առևտրային համակարգ մուտքագրվելուց անմիջապես հետո կարող է բավարարվել վաճառքի (գնման) լավագույն գնով ըստ հերթականության շուկայում առկա ծավալի չափով:

1.3.12 Լավագույն գին՝ առքի դեպքում՝ տվյալ պահին վաճառքի առկա ամենացածր գինը, վաճառքի դեպքում՝ տվյալ պահին առքի առկա ամենաբարձր գինը:

1.3.13 Տեղեկատվական բազա՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարվող ՀՀ կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազան: Տեղեկատվական բազան ենթակա է հրապարակման ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

1.3.14 Որակավորված ներդրող (ֆիզիկական անձ), Տեղեկատվական բազայում որպես այդպիսին գրանցված ֆիզիկական անձ, որը բավարարում է հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.

1.3.14.1 անձը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն 500 000 ՀՀ դրամ,

1.3.14.2 ֆիզիկական անձի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն ՀՀ դրամը կամ ֆիզիկական անձի զուտ եկամուտը դիմումի ներկայացմանը նախորդող հաշվետու տարվա ընթացքում գերազանցում է 100 միլիոն ՀՀ դրամը,

1.3.14.3 ֆիզիկական անձը ֆինանսական ոլորտում ունի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է արժեթղթերում ներդրումների հետ կապված գիտելիքներ:

1.3.15 Որակավորված ներդրող (իրավաբանական անձ)՝ Տեղեկատվական բազայում որպես որակավորված ներդրող գրանցված անձ:

1.3.16 Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց՝ ցանկացած միջոց, որը հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ և պահպանել անձնապես իրեն ուղղված տեղեկատվությունը, և որը հետագայում հնարավորություն կտա այն լիարժեք օգտագործել և պահպանված տեղեկատվությունը վերարտադրել: Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցները զետեղված են Բանկի կողմից հաճախորդին տրամադրվող ծանուցման մեջ:

1.3.17 Համակարգ՝ արժեթղթերի շարժը սպասարկող էլեկտրոնային համակարգ:

1.3.18 «Առաքում վճարման դիմաց» հանձնարարական՝ արժեթղթերի և դրամի միաժամանակյա փոխանցում, որը կատարվում է Համակարգում հանդիպակաց հանձնարարականի առկայության դեպքում:

1.3.19 «Ազատ առաքման» հանձնարարական՝ արժեթղթերի միակողմանի փոխանցում:

1.3.20 Կարգադրություն՝ «Դիլինգ կենտրոն» վարչության (այսուհետ՝ ԴԿՎ) կողմից Հաշվապահական հաշվառման վարչության Թղթակցային հաշիվների հաշվառման բաժնին (այսուհետ՝ ԹՀՀԲ) և/կամ Հաճախորդների սպասարկման կենտրոնական գրասենյակին (այսուհետ՝ ՀՍԿԳ) ծառայությունների մատուցմամբ պայմանավորված միջոցների շարժի իրականացման/հաշվառման նպատակով տրվող Բանկի ղեկավարության կողմից հաստատված փաստաթուղթ:

1.3.21 Հանձնարարական՝ պետական պարտատոմսերի շարժը, կարգավիճակը հաշվառող սույն կարգի 1.3.18-1.3.19 կետերով սահմանված փաստաթուղթ՝ Բանկի և դեպո հաշվից ելքագրման դեպքում՝ նաև հաճախորդի կողմից վավերացված:

1.4 Սույն կարգով ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ մատուցող ստորաբաժանում է համարվում ԴԿՎ-ն, ներդրումային և ոչ հիմնական ծառայությունները «Գործառնական օր» ծրագրում հաշվառող ստորաբաժանում՝ ԹՀՀԲ-ն, ներդրումային և ոչ հիմնական

ծառայություններով պայմանավորված ոչ պետական արժեթղթերի և դրամական միջոցների շարժը ապահովող ստորաբաժանում՝ ՀՍԿԳ-ն:

2 ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Բանկի կողմից ներդրումային ծառայությունները մատուցվում են հաճախորդի և Բանկի միջև կնքված «Ներդրումային ծառայությունների մատուցման» պայմանագրի (հավելված 1) և/կամ «ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման և հետգնման աճուրդներին ծառայությունների մատուցման գործակալության» պայմանագրի (այսուհետ՝ «Գործակալության» պայմանագիր) (հավելված 1.1) հիման վրա: Պայմանագրերը կազմվում են երկու օրինակից:

2.2 Բանկի կողմից Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունները մատուցվում են հաճախորդի և Բանկի միջև կնքված Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունների մատուցման գրավոր պայմանագրի (հավելված 2) հիման վրա: Պայմանագիրը կազմվում է երկու օրինակից:

2.3 Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունների մատուցման պայամանագրի համաձայն հաճախորդի համար բացվում է պետական պարտատոմսերի հաշվառման դեպո հաշիվ:

2.4 Նախքան պայմանագրի կնքումն ու ներդրումային և պահառության ծառայությունների մատուցումը Բանկը հաճախորդներին տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը (հավելված 3).

2.4.1 Բանկի և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին՝

2.4.1.1 Բանկի անվանումը և կապի միջոցները,

2.4.1.2 Տեղեկատվություն, թե ինչ լեզուներով հաճախորդը կարող է կապ հաստատել Բանկի հետ և ստանալ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

2.4.1.3 Մինյանց հետ կապ հաստատելու և տեղեկատվություն փոխանակելու մեթոդները, ինչպես նաև պատվերների ընդունման և հաղորդման կարգը:

2.4.1.4 Այն հիմքերը, որի համաձայն ներդրումային ծառայություններ մատուցող անձն իրավասու է մատուցել ներդրումային ծառայություններ, ինչպես նաև այդ անձին լիցենզավորած և(կամ) գրանցած իրավասու մարմնի անվանումը և կապի միջոցները:

2.4.1.5 Տեղեկատվություն հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին:

2.4.1.6 Բանկի կողմից հաճախորդի միջոցները տիրապետելու դեպքում այն քայլերի համառոտ նկարագիրը, որոնք ձեռք են առնված հաճախորդի միջոցների պաշտպանությունը ապահովելու համար, ներառյալ Բանկի կողմից ներդրողների փոխհատուցման, միջոցների երաշխավորման կամ նման այլ սխեմաներում մասնակցության մասին:

2.4.1.7 Շահերի բախման սահմանափակման քաղաքականության համառոտ նկարագիրը (հաճախորդի պահանջի դեպքում՝ շահերի բախման քաղաքականության ամբողջ նկարագիրը):

2.4.2 Արժեթղթերի մասին՝

2.4.2.1 Արժեթղթերի և դրանց հետ առնչվող ռիսկերի նկարագիրը: Այդ նկարագրով պարզ և հասկանալի ձևով ներկայացվում են յուրաքանչյուր տեսակի

(բաժնետոմս, պարտատոմս և այլն) արժեթղթի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց առնչվող ռիսկերը:

2.4.2.2 Եթե Բանկը հաճախորդին տրամադրում է տեղեկություններ այնպիսի արժեթղթերի մասին, որն այդ պահին հրապարակային առաջարկի առարկա է և այդ նպատակով ազդագիր է հրապարակվել, ապա հաճախորդին պետք է տեղեկացնի, թե որտեղ է հրապարակված այդ ազդագիրը կամ որտեղից կարելի է այն ձեռք բերել:

2.4.2.3 Այն դեպքերում, եթե արժեթղթից բխող ռիսկերը երաշխավորված են երրորդ անձի կողմից, Բանկը հաճախորդին պետք է ներկայացնի տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորություն տվողի մասին և հաճախորդներին պետք է տեղեկացնի, որ արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:

2.4.3 Գործարքի կնքման վայրի (միջոցի) մասին (ֆոնդային բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա):

2.4.4 Համապատասխան ծախսերի և միջնորդավճարների մասին՝

2.4.4.1 ներդրումային և պահառության ծառայություններից օգտվելու համար հաճախորդի կողմից վճարման ենթակա համախառն գումարը՝ ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են Բանկի կողմից՝ որպես հարկային գործակալ: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա ներկայացվում է հաշվարկման ձևը:

2.4.4.2 Վճարումներ կատարելու եղանակները:

2.5 Սույն Կարգի 2.4.2 և 2.4.4 կետերով սահմանված պահանջները կարող են չպահպանվել պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում:

2.6 Նախքան պայմանագրի կնքումն ու ներդրումային ծառայությունների մատուցումը Բանկը հաճախորդներին դասակարգում է՝ որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ:

2.6.1 Որպես պրոֆեսիոնալ հաճախորդ կարող են դասակարգվել բացառապես որակավորված ներդրողները՝ իրենց համաձայնությունը տալու դեպքում (հավելված 4):

2.6.2 Նախքան պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելը Բանկն այդ հաճախորդին տեղեկացնում է այն մասին, որ սույն Կարգով սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու իր և հաճախորդի փոխհարաբերություններում՝ ներկայացնելով այդ պահանջների էությունը: Այն հաճախորդները, որոնք սույն Կարգում նշված ներդրումային ծառայություններից որևէ մեկի մասով կամ բոլոր ծառայությունների մասով տվել են իրենց համաձայնությունը որպես պրոֆեսիոնալ որակվելու համար, համապատասխան գրավոր հայտարարություն են ներկայացնում Բանկին այն մասին, որ.

2.6.2.1 համաձայն են որակվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ,

2.6.2.2 տեղյակ են, որ որպես պրոֆեսիոնալ հաճախորդ որակվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իրենց նկատմամբ և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:

2.6.3 Բանկի կամ պրոֆեսիոնալ հաճախորդի նախաձեռնությամբ թույլատրվում է տվյալ անձին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և իրականացնել դրանից բխող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.6.4 Եթե Բանկը տեղեկանում է, որ հաճախորդը դադարել է որակավորված ներդրող լինելուց, ապա անհապաղ միջոցներ է ձեռնարկում այդ հաճախորդի պրոֆեսիոնալ կարգավիճակը դադարեցնելու ուղղությամբ:

2.7 Ներդրումային ծառայությունների մատուցման դեպքում Բանկը հաճախորդից պահանջում է տեղեկատվություն մատուցվող ներդրումային ծառայությունների կամ արժեթղթի վերաբերյալ հաճախորդի գիտելիքների և փորձի մասին՝ գնահատելու համար, թե տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում են հաճախորդի պահանջներին (հավելված 5):

2.7.1 Եթե Բանկը հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը չեն համապատասխանում հաճախորդի պահանջներին, ապա զգուշացնում է հաճախորդին այդ մասին:

2.8 Սույն Կարգի 2.7 կետում նշված տեղեկատվությունը հաճախորդի կողմից չտրամադրվելու կամ ոչ բավարար տրամադրվելու դեպքում, Բանկը հաճախորդին զգուշացնում է, որ հաճախորդի նման վարքագիծը Բանկին թույլ չի տալիս գնահատել տվյալ ներդրումային ծառայության կամ արժեթղթի համապատասխանությունը հաճախորդի պահանջներին:

2.9 Սույն Կարգի 2.7 կետում նշված գործողություններն իրականացնելիս Բանկը որոշում է, թե հաճախորդն ունի ներդրումային գործունեության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, որպեսզի հասկանա տվյալ ներդրումային ծառայության կամ արժեթղթից բխող ռիսկերը: Բանկը կարող է համարել, որ պրոֆեսիոնալ հաճախորդներն ունեն այդ անհրաժեշտ գիտելիքները և փորձը:

2.10 Եթե Բանկը իրականացնում է հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում և/կամ Բանկի կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում ծառայությունները առանձին կամ ոչ հիմնական ծառայության հետ մեկտեղ, ապա իրավունք ունի հաճախորդից չպահանջել նրա գիտելիքների և փորձի մասին տեղեկություններ ներքոհիշյալ պահանջների միաժամանակյա բավարարման դեպքում.

2.10.1 նշված ծառայությունները կապված են՝

2.10.1.1 Հայաստանի Հանրապետության, ՀՀ կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության համայնքերի կողմից թողարկված կամ երաշխավորված արժեթղթերի հետ,

2.10.1.2 կրոնական, կրթական, բարեգործական և այլ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կրոնական, կրթական կամ բարեգործական նպատակներով թողարկված արժեթղթերի հետ:

2.10.2 Բանկը հաճախորդին պարզ (վերջինիս համար հասկանալի) ձևով ներկայացրել է սույն բացառության կիրառման մասին:

2.11 Նախքան ներդրումային ծառայությունների մատուցման/գործակալության պայմանագրի կնքումն ու ծառայությունների մատուցումը Բանկը հաճախորդներին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:

2.12 Արժեթղթերը պահառության հանձնելը չի հանգեցնում Բանկին արժեթղթերի սեփականության իրավունքի փոխանցման: Պահառության հանձնված արժեթղթերը չեն կարող բռնագանձվել Բանկի պարտավորությունների դիմաց և Բանկի լուծարման դեպքում չեն ընդգրկվում լուծարային գույքի կազմում:

2.13 Հաճախորդի արժեթղթերի հաշվում պահառության հանձնված արժեթղթերի վերաբերյալ Բանկի կողմից կատարված գրառումները հավաստում են արժեթղթերի նկատմամբ հաճախորդի իրավունքը:

2.14 Պահառության գործունեությունը կարգավորող կանոնները կրում են հրապարակային բնույթ:

2.15 Ներդրումային ծառայությունների մատուցման/գործակալության կամ Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունների մատուցման պայմանագրերի լուծման և հաճախորդի արժեթղթերի և դրամական միջոցների փոխանցման ընթացակարգերը իրականացվում են պայմանագրերով սահմանված դրույթներին համապատասխան:

3 ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

3.1 Յուրաքանչյուր հաճախորդի հնարավորություն է ընձեռվում Բանկի միջնորդությամբ ձեռք բերել կամ վաճառել արժեթղթեր առաջնային տեղաբաշխման կամ հետգնման աճուրդների ժամանակ:

3.2 Հաճախորդը, սակարկություններից առնվազն 30 րոպե առաջ արժեթղթերի առքի կամ վաճառքի հայտը («Ներդրումային ծառայությունների մատուցման» պայմանագրին կից Հավելված 1-1 կամ «Գործակալության» պայմանագրին կից Հավելված 1.1-1) ներկայացնում է ԴՎԿ-ին: Գնվող կամ վաճառվող արժեթղթերի ծավալը և գնման կամ վաճառքի գինը սահմանում է հաճախորդը:

3.2.1 Նախնական դեպոնացման անհրաժեշտության դեպքում, հայտն ընդունվում է հայտի ներկայացման պահին հաճախորդի հաշվին կամ հատուկ հաշվին անհրաժեշտ գումարի կամ համապատասխան քանակությամբ արժեթղթերի և միջնորդավճարի առկայության դեպքում:

3.2.2 Բանկի կողմից սահմանված սահմանաչափերի (սահմանաչափերը հաստատվում են Բանկի վարչության որոշմամբ և «Գործակալության» պայմանագրով սահմանված կարգով ծանուցվում են հաճախորդներին) առկայության դեպքում հաճախորդը կարող է մասնակցել պետական պարտատոմսերի տեղաբաշխման/հետգնման աճուրդներին առանց նախնական դեպոնացման անհրաժեշտության՝ ստանձնելով պարտականություն անհրաժեշտ քանակությամբ պետական պարտատոմսերը և/կամ դրամական միջոցները, ներառյալ ծառայության մատուցման դիմաց գանձվող միջնորդավճարը ապահովել սեփական և/կամ հատուկ հաշիվներին, վերջնահաշվարկի օրը մինչև ժամը 10:30-ը:

3.3 Հայտը ստանալուց հետո իրականացվում է հաճախորդի դրամական միջոցների սառեցում մինչև աճուրդի արդյունքները հայտնի դառնալը:

3.4 ԴԿՎ-ն ապահովում է հաճախորդի անունից հայտի ներկայացումը արժեթղթերի տեղաբաշխման կամ հետգնման աճուրդներին:

3.5 Հաճախորդի արժեթղթերի ձեռքբերման հայտի բավարարման (մասնակի բավարարման) դեպքում, Բանկը վերջնահաշվարկի օրը գնված արժեթղթերը մուտքագրում/փոխանցում է հաճախորդի պայմանագրով նախատեսված դեպո հաշվին, գանձում/ելքագրում է հաճախորդի բանկային(քարտային) հաշվից/հատուկ դրամային հաշվից արժեթղթերի ձեռքբերման գումարը՝ գանձելով ծառայության դիմաց միջնորդավճարը:

3.6 Հաճախորդի արժեթղթերի վաճառքի հայտի բավարարման (մասնակի բավարարման) դեպքում, Բանկը վերջնահաշվարկի օրը վաճառված արժեթղթերը ելքագրում է հաճախորդի պայմանագրով նախատեսված դեպո հաշվից/հատուկ դեպո հաշվից, և

մուտքագրում/փոխանցում է հաճախորդի բանկային(քարտային) հաշվին/հատուկ դրամային հաշվին վաճառված արժեթղթերի դիմաց գումարը՝ գանձելով ծառայության դիմաց միջնորդավճարը :

3.7 Հաճախորդի հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման դեպքում աճուրդի անցկացման օրը ԴԿՎ-ն հաճախորդին ներկայացնում է Հայտի բավարարումը (մասնակի բավարարում) կամ մերժումը («Ներդրումային ծառայությունների մատուցման» պայմանագրին կից Հավելված 1-3 կամ «Գործակալության» պայմանագրին կից Հավելված 1.1-3), որը ստորագրվում և կնքվում է Բանկի կողմից:

3.8 Մերժված կամ մասնակի բավարավածհայտերի դեպքում Հատուկ հաշվին փոխանցված միջոցները վերադարձվում են հաճախորդին՝ «Գործակալության» պայմանագրում նշված հաշիվներին.

3.8.1 մերժված հայտի դեպքում՝ ամբողջությամբ,

3.8.2 մասնակի բավարարման դեպքում՝ չբավարարված մասով՝ նվազեցրած գանձված միջնորդավճարների չափով:

3.9 Այն դեպքում, երբ հաճախորդները միևնույն գնով արժեթղթեր ձեռք բերելու/վաճառելու հայտ են ներկայացնում, և հայտը բավարարվում է մասնակիորեն, Բանկը բավարարում է հաճախորդների հայտերը համամասնորեն կամ առաջնահերթ բավարարված է համարվում ավելի վաղ ներկայացրած հաճախորդի հայտը՝ կախված թողարկողի աճուրդի բավարարման և աճուրդի կազմակերպման սկզբունքներից:

3.10 Այն դեպքում, երբ հաճախորդները միևնույն գնով և նույն ժամին արժեթղթեր ձեռք բերելու/վաճառելու հայտ են ներկայացնում, և հայտը բավարարվում է մասնակիորեն, Բանկը բավարարում է հաճախորդների հայտերը համամասնորեն:

3.11 Այն դեպքում, երբ Բանկը և հաճախորդը միևնույն գնով արժեթղթեր ձեռք բերելու/վաճառելու հայտ են ներկայացրել և տվյալ գնով հայտերը բավարարվել են մասնակիորեն, ապա Բանկն առաջնահերթ բավարարված է համարում հաճախորդի հայտը:

3.12 Բանկն առաջնային շուկայում ապահովում է մասնակցությունը (հայտերի ներկայացումը) աճուրդներին նախապես ստացված հայտարարության պահանջներին համապատասխան:

4 ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

4.1 Գործառնություններ կարող են իրականացվել երկրորդային՝ ինչպես կարգավորվող («Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ), այնպես էլ չկարգավորվող շուկայում: Յուրաքանչյուր հաճախորդի հնարավորություն է ընձեռնվում ԴԿՎ-ի միջնորդությամբ ձեռք բերել կամ օտարել ցանկացած քանակությամբ արժեթղթեր երկրորդային շուկայում:

4.2 Հաճախորդը, երկրորդային շուկայում արժեթղթեր ձեռք բերելու կամ վաճառելու համար, իր բանկային/քարտային հաշվին համապատասխան գումարի կամ դեպո հաշվին համապատասխան քանակությամբ արժեթղթերի առկայության դեպքում, ԴԿՎ է ներկայացնում գնման կամ վաճառքի հայտ («Ներդրումային ծառայությունների մատուցման» պայմանագրին կից Հավելված 1-2):

4.3 ՀՀ կարգավորվող շուկայում գործարքներ իրականացնելու հայտի ընդունման վերջնաժամկետ է համարվում գործարքի կատարման օրը մինչև ժամը 14:15-ը:

4.4 ԴԿՎ-ն մինչև ժամը 14:15-ը դեպոնացնում է իր և/կամ հաճախորդի արժեթղթերը (վաճառքի դեպքում) կամ դրամական միջոցները (առքի դեպքում), հայտում նշված ծավալներին համապատասխան:

4.5 Հաճախորդների հայտերը մուտքագրվում են բորսայի հարթակ ըստ ժամանակագրական սկզբունքի (հաճախորդի ներկայացրած հայտում նշվում է հայտի ներկայացման ժամը):

4.6 Տարբեր հաճախորդներից նույն թողարկման արժեթղթերի միևնույն գնով առքի և/կամ վաճառքի հայտերի ստացման դեպքում, Բանկը կարող է հայտերը ներկայացնել մեկ հայտի տեսքով և գործարքի կատարման դեպքում հայտերը բավարարված է համարում ժամանակագրական սկզբունքի համաձայն:

4.7 Եթե Բանկը իր և հաճախորդի անունից բորսայի հարթակում հայտ է ներկայացրել միևնույն գնով, ապա հայտի բավարարման դեպքում առաջնահերթ բավարարված է համարվում հաճախորդի հայտը:

4.8 Եթե ընդունվում են հանդիպակաց հայտեր,

4.8.1 միևնույն կատարման գնով լիմիտային հայտերի դեպքում, Բանկը գործարքը կատարում է կարգավորվող շուկայից դուրս՝ նախապես այդ մասին տեղեկացնելով հաճախորդներին, բացառությամբ այն արժեթղթերով գործարքների, որոնցով գործքարքների կատարումը պարտադիր է կարգավորվող շուկայում,

4.8.2 շուկայական հայտերի դեպքում Բանկը դրանք մուտքագրում է բորսայի հարթակ ըստ ժամանակագրական սկզբունքի:

4.9 Արժեթղթերի գնման հայտի բավարարման դեպքում գնված արժեթղթերը նույն բանկային օրվա ընթացքում մուտքագրվում են հաճախորդի դեպո, իսկ վաճառքի դեպքում դրամական միջոցները մուտքագրվում են հաճախորդի բանկային/քարտային հաշվին՝ գանձելով համապատասխան միջնորդավճար:

4.10 Հաճախորդի հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման դեպքում ԴԿՎ-ն հաճախորդին ներկայացնում է Հայտի բավարարումը (մասնակի բավարարում) կամ մերժումը («Ներդրումային ծառայությունների մատուցման» պայմանագրին կից Հավելված 1-3), որը ստորագրվում և կնքվում է Բանկի կողմից:

4.11 Հաճախորդի գրավոր հայտով առևտրային նստաշրջանի ընթացքում մինչև ժամը 14:30 կարող են կատարվել նաև ապադեպոնացումներ (Հավելված 6):

4.12 ԴԿՎ-ն, երկրորդային (չկարգավորվող) շուկայում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված արժեթղթերի առքի կամ վաճառքի աճուրդներին մասնակցությունը իրականացնում է սույն կարգի 3.2-3.12 կետերի ընթացակարգերին համապատասխան:

4.13 ԴԿՎ-ն համապատասխան առաջարկի դեպքում, հաճախորդի անունից կնքում է արժեթղթերի գնման կամ վաճառքի պայմանագիր: Գնված արժեթղթերը մուտքագրվում են հաճախորդի դեպո հաշվին, իսկ վաճառքի դեպքում՝ արժեթղթերի վաճառքից ստացված գումարը ստանալուց նույն բանկային օրվա ընթացքում այն մուտքագրում է հաճախորդի բանկային/քարտային հաշվին :

4.14 Հաճախորդը կարող է կնքել արժեթղթերի առք ու վաճառքի պայմանագրեր իր անունից՝ նույն օրը Բանկ ներկայացնելով կատարած գործարքը հաստատող փաստաթուղթ և դեպո հաշվի հանձնարարական համապատասխան փոխանցումներ կատարելու նպատակով: Հաճախորդի անունից կատարված գործարքի պայմանագրում պարտադիր է գործարքի երկու կողմերի, իսկ հանձնարարականներում հաճախորդի ստորագրության ու կնիքի (իրավաբանական անձի դեպքում) առկայությունը: Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականները ստորագրվում և կնքվում են նաև Բանկի կողմից:

4.15 Հաճախորդի հանձնարարականներն ընդունվում են գործառնական օրվա ժամը 9:00-ից մինչև 16:00: 15:30-ից հետո ներկայացված հանձնարարականները ԴԿՎ-ի կողմից ենթակա են կատարման մեկ բանկային օրվա ընթացքում:

5 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՐԺԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

5.1 Կարգավորվող շուկայում ծառայություն մատուցելու նպատակով միջոցների դեպոնացման/ապադեպոնացման գործընթաց.

5.1.1 Պետական պարտատոմսերի դեպոնացումը իրականացնում է ԴԿՎ-ն՝ Համակարգ «Ազատ առաքման» հանձնարարականի մուտքագրմամբ:

5.1.2 Ոչ պետական արժեթղթերով կարգավորվող շուկայում գործարքներ իրականացնելու նպատակով ԴԿՎ-ն համապատասխան կարգադրություններ է տալիս ՀՍԿԳ-ին՝ դրամական միջոցների և արժեթղթերի, իսկ ԹՀՀԲ-ին դրամական միջոցների դեպոնացման վերաբերյալ:

5.1.3 Միջոցների ապադեպոնացումը կարգավորվող շուկայի օպերատորի կոմից տրված համակարգով իրականացնում է ԴԿՎ-ն:

5.2 Բավարարված հայտերի սպասարկման գործընթաց.

5.2.1 Պետական պարտատոմսերի դեպքում.

5.2.1.1 Վերջնահաշվարկի օրը ԴԿՎ-ն պարտատոմսերի շարժի իրականացման համար Համակարգ է մուտքագրում համապատասխան հանձնարարականը:

5.2.1.2 ԹՀՀԲ-ն ԴԿՎ-ի կողմից ներկայացված հայտի և հայտի հաստատման կամ պայմանագրի, ինչպես նաև արժեթղթերի շարժի հանձնարարականի պատճենի ու կարգադրության (անհրաժեշտության դեպքում) հիման վրա «Գործառնական օր» ծրագրում հաշվառում է պարտատոմսերի շարժը և/կամ իրականացնում դրամական միջոցների համապատասխան շարժը, այդ թվում՝ գանձելով ներդրումային ծառայության դիմաց միջնորդավճարը:

5.2.2 Ոչ պետական արժեթղթերի դեպքում.

5.2.2.1 ՀՍԿԳ-ն ԴԿՎ-ի կողմից ներկայացված կարգադրության հիման վրա իրականացնում է արժեթղթերի և դրամական միջոցների համապատասխան շարժը՝ գանձելով ծառայության դիմաց գանձվող միջնորդավճարը:

5.3 Մերժված հայտերի սպասարկման գործընթաց.

5.3.1 Պետական պարտատոմսերի դեպքում.

5.3.1.1 Նախապես դեպոնացված պետական պարտատոմսերի վերադարձը իրականացնում է ԴԿՎ-ն համապատասխան հանձնարարականի մուտքագրմամբ Համակարգ:

5.3.1.2 ԹՀՀԲ-ն ԴԿՎ-ի կողմից ներկայացված հայտի մերժման, արժեթղթերի շարժի հանձնարարականի պատճենի և կարգադրության (անհրաժեշտության դեպքում) հիման վրա «Գործառնական օր» ծրագրում հաշվառում է պարտատոմսերի շարժը և/կամ իրականացնում դրամական միջոցների համապատասխան շարժը :

5.3.2 Ոչ պետական արժեթղթերի դեպքում.

5.3.2.1 ՀՍԿԳ-ն իրականացնում է պարտատոմսերի և դրամական միջոցների համապատասխան շարժը ԴԿՎ-ի կողմից ներկայացված կարգադրության հիման վրա:

6 ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԸ

6.1 Կորպորատիվ արժեթղթերի պահառությունը իրականացվում է ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության» աշխատակարգի համաձայն:

6.2 Պետական պարտատոմսերի պահառությունը իրականացվում է սույն կարգի դրույթներին համապատասխան:

6.3 Պահառուական ծառայությունների մատուցման նախապայման է հանդիսանում հաճախորդի բանկային/քարտային հաշվի առկայությունը Բանկում: Պետական պարտատոմսերի հաշվառման դեպո հաշիվը բացվում է Հաճախորդի բանկային հաշվի գործում առկա փաստաթղթերի հիման վրա:

6.4 «Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունների մատուցման» պայմանագրի համաձայն ԹՀՀԲ-ն հաճախորդի համար «Գործառնական օր» ծրագրում բացում է պետական պարտատոմսերի հաշվառման դեպո հաշիվ :

6.5 Նախքան «Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունների մատուցման» պայմանագրի կնքումն ու ծառայությունների մատուցումը Բանկը հաճախորդներին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու պահառության գործունեությունը կարգավորող իրավական ակտերին:

6.6 Պահառության պայմանագրի կնքումը և դեպո հաշվի բացումը չի պահանջում պարտատոմսերի անմիջապես մուտքագրում դեպո հաշվի վրա:

6.7 Պետական պարտատոմսերի հաշվից պարտատոմսերի ելքագրման համար հիմք է հանդիսանում հաճախորդի կամ նրա լիազորված անձանց կողմից տրված հանձնարարականը հետևյալ պայմանների միաժամանակյա բավարարման դեպքում՝

6.7.1 հանձնարարականը վավերացված է հաճախորդի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից, այնուհետև նաև Բանկի կողմից,

6.7.2 հանձնարարականում նշված գումարը պետք է լինի հանձնարարականի ստացման օրվա դրությամբ հաշվի կրեդիտային մնացորդի սահմաններում,

6.7.3 հանձնարարականը ստացվել է Բանկի գործառնական օրվա ընթացքում (9:00-16:00):

6.8 Հաճախորդի դեպո հաշվից ելքագրված պարտատոմսերը «Գործառնական օր» ծրագրում հաշվառում է ԹՀՀԲ-ն՝ ԴԿՎ-ի կողմից տրամադրված համապատասխան հանձնարարականի պատճենի հիման վրա:

6.9 Հաճախորդի դեպո հաշվին մուտքագրված պարտատոմսերը «Գործառնական օր» ծրագրում հաշվառում է ԹՀՀԲ-ն՝ ԴԿՎ-ի պետի նշագրմամբ ԴԿՎ-ի կողմից տրամադրված Համակարգում ստացված մուտքի/գրավադրման վերաբերյալ հաղորդագրության հիման վրա:

6.10 Հաճախորդի հաշվում հաշվառվող պետական պարտատոմսերի մարման կամ մասնակի մարման դեպքում՝ Բանկը պակասեցնում է արժեթղթերի հաշվի մնացորդը՝ մարվող գումարը մուտքագրելով հաճախորդի բանկային/քարտային հաշվին:

6.11 Հաճախորդի պետական պարտատոմսերի դիմաց թողարկողի կողմից Բանկին վճարված տոկոսագումարը ԹՀՀԲ-ն մուտքագրում է հաճախորդի բանկային/քարտային հաշվին ոչ ուշ, քան վճարմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը՝ ԴԿՎ-ի կողմից ներկայացրած կարգադրության հիման վրա:

6.12 Բանկն իրավունք ունի գրավադրելու հաճախորդի պետական պարտատոմսերն իր անունից միայն վերջինիս հետ կնքված գրավոր համաձայնության հիման վրա:

6.13 Բանկն իրավունք չունի.

6.13.1 որոշել և վերահսկել հաճախորդին պատկանող պետական պարտատոմսերի օգտագործման ուղղությունները կամ սահմանել նորմատիվ իրավական ակտերով կամ

պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ՝ իր հաճախորդի արժեթղթերը սեփական հայեցողությամբ տնօրինելու իրավունքների նկատմամբ:

6.13.2 օգտագործել իր հաճախորդների արժեթղթերը՝ սեփական պարտավորությունները մարելու համար, ինչպես նաև օգտագործել վերջիններս որպես իր սեփական, իր՝ այլ հաճախորդների կամ երրորդ անձանց նկատմամբ ունեցած պարտավորությունների ապահովման միջոց:

6.14 Բանկը չի կարող փակել պետական պարտատոմսերի այն հաշիվները, որոնցում առկա է մնացորդ:

6.15 Զրոյական մնացորդներ ունեցող պետական պարտատոմսերի հաշիվները կարող են փակվել.

6.15.1 հաճախորդի հանձնարարականով,

6.15.2 դեպո հաշվի սպասարկման պայմանագրի դադարեցման դեպքում, այդ թվում՝ Բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում,

6.15.3 դեպո հաշվով առնվազն 1 տարի որևէ գործառնություն չիրականացվելու դեպքում (եթե այլ բան սահմանված չէ Բանկի կանոններով կամ պայմանագրով):

7 ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

7.1 Բանկը գրանցումներ է կատարում հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի վերաբերյալ համապատասխան մատյանում (հավելված 7):

7.2 Գրանցումները կատարվում են պատվերների ստացման պահից ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

7.3 Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի վերաբերյալ գրանցումները առնվազն ներառում են հետևյալ տեղեկությունները.

7.3.1 հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,

7.3.2 հաճախորդի կողմից տրված պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),

7.3.3 հաճախորդի կողմից տրված պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրության պատվեր, օպցիոնի իրականացման պատվեր և այլն),

7.3.4 հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),

7.3.5 արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

7.3.6 արժեթղթերի քանակը,

7.3.7 միավորի գինը,

7.3.8 ընդհանուր ծավալը,

7.3.9 հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),

7.3.10 հաճախորդի կողմից տրված պատվերի ստացման ճշգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն,

7.3.11 պատվերը գրանցողի անունը, ազգանունը:

7.4 Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում ծառայություն մատուցելիս Բանկն ընդունված և հաղորդված պատվերների կատարման մասին հաստատումը ստանալուց հետո ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, կատարում է գրանցումներ կատարված գործարքի վերաբերյալ:

7.5 Բանկի կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում ծառայություն մատուցելիս Բանկը հաճախորդի պատվերը կատարելուց հետո ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, կատարում է գրանցումներ կատարված գործարքի վերաբերյալ:

7.6 Սույն Կարգի 7.4 և 7.5 կետերի համաձայն կատարվող գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.

7.6.1 հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,

7.6.2 գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը և օրը,

7.6.3 գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,

7.6.4 գործարքի տեսակը (առք, վաճառք),

7.6.5 գործարքի բնույթը, եթե գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),

7.6.6 արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի և արժեթղթի անվանումը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

7.6.7 արժեթղթերի քանակը,

7.6.8 միավորի գինը,

7.6.9 ընդհանուր ծավալը,

7.6.10 գործարքի մյուս կողմը,

7.6.11 գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),

7.6.12 գործարքը կատարողի անունը, ազգանունը (սույն Կարգի 7.4 կետով սահմանված դեպքում՝ գործարքի կատարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը):

7.7 Եթե Բանկը հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման պատվերներ է ընդունում և հաղորդում, ապա պատվերի հաղորդումից հետո ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը կատարում է գրանցումներ ընդունված և հաղորդված պատվերների վերաբերյալ համապատասխան մատյանում (հավելված 7): Այդ գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.

7.7.1 հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,

7.7.2 այն անձի անվանումը կամ նույնականացնող համարը, ում հաղորդվել է պատվերը,

7.7.3 հաղորդված պատվերի պայմանները՝ համաձայն սույն Կարգի 7.3.2-7.3.9 կետերում նշված տեղեկատվության,

7.7.4 պատվերի հաղորդման ամսաթիվը և ճշգրիտ ժամը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն:

8 ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Բանկը հաճախորդի պատվերը կատարելուց հետո ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով հաճախորդին տրամադրում է պատվերի կատարման մասին հաշվետվություն (հավելված 8), որը ներառում է.

8.1.1 Բանկի անվանումը,

8.1.2 հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,
8.1.3 գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,
8.1.4 գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն ,
8.1.5 հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
8.1.6 գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),
8.1.7 արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
8.1.8 պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
8.1.9 պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
8.1.10 արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),
8.1.11 միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),
8.1.12 ընդհանուր ծավալը,
8.1.13 գանձված միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը (ըստ յուրաքանչյուր վճարի),
8.1.14 հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին հաճախորդը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),
8.1.15 տեղեկատվություն այն փաստի մասին, որ հաճախորդի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ կամ այդ ներդրումային ծառայություններ մատուցող անձի մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար:

8.2 Եթե հաճախորդի պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Բանկը հաճախորդին ներկայացնում է պատվերի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

8.3 Բանկը հաճախորդի պատվերը կատարելուց հետո ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը պայմանագրում նշված եղանակով հաճախորդին տրամադրում է Հաշվետվություններ և տեղեկանքներ (հավելված 9):

9 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն կարգով նախատեսված ծառայությունների մատուցման միջնորդավճարները գանձվում են Բանկում գործող սակագների համաձայն:

9.2 ԴԿՎ-ն վարում է հաճախորդների հետ կնքված պայմանագրերի, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, հանձնարարականների և կից փաստաթղթերի հաշվառում առանձնացված թղթապանակներում:

9.3 Բանկը սույն կարգում կատարված փոփոխությունների մասին տեղեկացնում է հաճախորդներին տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցներով՝ վերջիններս ուժի մեջ մտնելուց առաջ, ոչ ուշ քան երկշաբաթյա ժամկետում:

10 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

№	ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՅՑԸ
1	«Ներդրումային ծառայությունների մատուցման» պայմանագիր	R/DZ/0/K087.1/27.01.2021/9
1.1	«ՀՀ պետական (զանձապետական) պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման և հետգնման աճուրդներին ծառայությունների մատուցման գործակալության» պայմանագիր	R/DZ/0/K087.1.1/27.01.2021/4
2	Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունների մատուցման» պայմանագիր	R/DZ/0/K087.2/27.01.2021/7
3	««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից մատուցվող ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների վերաբերյալ» տեղեկատվություն	R/DZ/0/K087.3/27.01.2021/9
4	«Որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելու վերաբերյալ» հայտարարություն	R/DZ/0/K087.4/27.01.2021/7
5	«Հաճախորդի փորձի և գիտելիքների վերաբերյալ» տեղեկանք	R/DZ/0/K087.5/27.01.2021/7
6	«Արժեթղթերի ապադեպոնացման» հայտ	R/DZ/0/K087.6/27.01.2021/9
7	«Հաճախորդների կողմից տրված, ընդունված և հաղորդված պատվերների գրանցման» մատյան	R/DZ/0/K087.7/30.01.2021/9
8	Հաշվետվություն	R/DZ/0/K087.8/27.01.2021/9
9	«Դեպո հաշվի վերաբերյալ» հաշվետվություն, «Դեպո հաշվի վերաբերյալ» տեղեկանք	R/DZ/0/K087.9/27.01.2021/9